ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2022 թվականի N:337-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՇՈՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N106-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 107-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 127-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի, 9-րդ կետի 2-րդ ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ

կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 25-ի N01/09.3/9195-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 10-ի N16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N3 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N4 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N3 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N2 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N4 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N3 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված անդամ Շավարշ Արամյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Էմիլյա Ոսկանյանի և Մանուկ Մանուկյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Կարեն Աբրեյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Էմմա Սիմոնյանի և Լոնդա Անտանոսյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Լիաննա Հայկյանի և Պրաքսի Սարգսյանի լիազորությունները:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Գեղամ Հովհաննիսյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Կարեն Խաչատրյանի և Ալբերտ Մարգարյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Անահիտ Հովհաննիսյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Վիկտոր Հովհաննիսյանի և Գոհարիկ Մխեյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Ամալյա Մկրտչյանի և Սվետլանա Խոջոյանի լիազորությունները:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Լյովա Խաչատրյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Նաիրա Մարտիրոսյանի և Զորիկ Խաչատրյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Ավետիք Ամիրյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Կարեն Ամիրյանի և Վարշամ Աղաբաբյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից

առաջադրված անդամներ Նարինե Վարդանյանի և Եթերինա Մուրադյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 106-Ա որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 107-Ա որոշումը:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 127-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի հունիսի «26» N337 - Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՇՈՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ

1.	Մուշեղ Մարգարյան Լիպարիտ Մարտիրոսյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Պարգև Գևորգյան Վանիկ Մարտիրոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Կարեն Աբրեյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Մարինե Միքայելյան Հակոբ Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Զինաիդա Հովհաննիսյան Մերի Հակոբյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Անահիտ Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Վիկտոր Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

	Հերմինե Ղարիբջանյան	«Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Վահագ Հովհաննիսյան Սվետլանա Խոջոյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Ավետիք Ամիրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Վարշամ Աղաբաբյան Կարեն Ամիրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Եթերինա Մուրադյան Լիլիթ Սուքիասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զույգաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է